

Լուկուլլոսի զինուորներուն թիւը Տիգրանակերտի նակատամարտին

(ԸՍՏ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐՈՒ)

ՊԵՐՃ ՍԱՊՊԱՂԵԱՆ

Լուկուլլոս, առանց Հռոմի ծերակոյտին կանխօրօք արտօնութեան, եւ Մոփքի թաւաւորին մեղսակցութեամբ, Հայաստանի սահմաններէն ներս խուժեց Ք. Ա. 69 թ.ի դարնան եւ պաշարեց Տիգրանակերտը:

Հռոմ պատերազմի մէջ չէր Հայկական Կայսրութեան հետ: Լուկուլլոս կը ծրագրէր անակնկալ յարձակումով, շփոթութեան մատնել Մեծն Տիգրանը, որ պատերազմական գործերով կը գլխուէր Ասորիք(1):

Նպատակէս դուրս կը մնայ մանրամասնօրէն անդրադառնալ պատերազմական գործողութիւններուն, եւ անոնց զարգացման փուլերուն: Սակայն, մօտ Ք. Ա. 77 թ.ին հիմնուած նոր մայրաքաղաքը, որուն պարիսպներն իսկ տակաւին ամբողջացած չէին, յանձնուեցաւ հռոմէական բանակներու կողոպուտին, Ք. Ա. 6 Հոկտ.ի 69 թ.ին:

Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցող Հայկական եւ հռոմէական բանակներուն զօրաթիւերը անհեթեթ համեմատութիւններով ներկայացուած են Հռոմի համակիր աղբիւրներու կողմէ: Ըստ Պլուտարքոսի եւ Ապպիանոսի, հռոմէական զօրքին թիւը եղած

1) Տես՝ Ս. Մ. Կրկեաշաբեան, Տիգրան Բ.ին վերաբերող մի կարեւոր ուղղում, «Պատմաբանասիրական Հանգէտ», Սրբուան, 1967, թիւ 4, էջ 275-278:

է 15·000 լեզէոնական, իսկ հայկական բանակին թիւը՝ 300·000 հոգի: Հետեւաբար, հռոմէացիք կռուած են իրենցմէ 20 անգամ զերազանց հայկական ուժերու դէմ, եւ յաղթած:

Հռոմի պատմութեան մասնագէտներէն ոմանք, առանց զննական եւ խղճամիտ պրպտումի, հետեւած են Պլուտարքոսի եւ Ալպիանոսի հաղորդած թիւերուն: Ուրիշներ սակայն, հիմնուելով փոքր-ասիական, հելլենիստական եւ չէզոք աղբիւրներու վրայ, ժխտած են հռոմէական անհեթեթ, դիտումնաւոր եւ չափազանցուած նկարազրութիւնները: Նորադոյն պատմազրութիւնը նկատի առնելով ռազմական, տեղեկագրական ինչպէս նաեւ ճակատամարտի վայրերին պայմաններն ու փոխադրական միջոցները, դիտական փաստերով յանդած է այն համոզիչ վարկածին որ հայկական բանակը չէր կրնար անցնիլ 70-80·000 հոգիի թիւը: Յ. Մանանդեան, իր «Քննական Տեսութիւն Հայ Ժողովուրդի Պատմութեան» Ա. հատորին մէջ(2), մանրակրկիտ կերպով ուսումնասիրած է հայ եւ հռոմէական բանակներու զորաթիւերը:

Որոշ է որ հռոմէական աղբիւրներ եւ մատենագիրներ, դիտումնաւոր կերպով իրենց հաղորդումներն ու պատմական անցուդարձերը խճողած են միակողմանի եւ խեղաթիւրուած տուեալներով, պանծացնելու համար Հռոմի փառքն ու զինուորական յաղթանակները եւ նոյն ատեն՝ նուաստացնելու թշնամին:

Մանանդեան իրաւացիօրէն կը շեշտէ որ հռոմէական աղբիւրներ զանց առած են յիշելու պատերազմին մասնակցող ոչ-հռոմէացի օժանդակ բանակները, որոնք ճակատամարտին մասնակցեցան որպէս դաշնակից ուժեր, ինչպէն Գաղատիոյ, Թրակիոյ եւ Բիւթանիոյ զորաբաժինները, գուցէ նաեւ Մոփքի բանակները: Մանանդեանէն մէջբերելով՝

«Օգնական այդ զորքերը որոնցից որոշակի յիշուած են դաւատացիները, թրակացիները եւ բիւթանացիները՝ կազմում էին, ըստ երեւոյթին, Լուկուլլոսի զորաբանակի նշանաւոր մասը: Ուստի մենք սխալուած չենք լինի, եթէ Լուկուլլոսի ամբողջ զորքի թիւն ընդունենք Տիգրանակերտի ճակատամարտում ո՛չ թէ մօտ 15·000, այլ աւելի քան 30·000:

«Այսպիսով հռոմէական եւ հայկական բանակների վերոյիշեալ մէկ առ քսան յարաբերութիւնը, ինչպէս տեսնում ենք, ակներեւ մի սխալ է: Ընդունելով, որ օգնական դաշնակից զորամասերի թիւը

2) Յ. Մանանդեան, Քննական Տեսութիւն Հայ Ժող. Պատմ., Ա. Հատոր, Երեւան, 1944, էջ 198-208:

պահաս չէր լինի հոռոմէական զօրքի թուից՝ դժուար չէ համոզուել, որ Տիգրանի զօրքն կարող էր Լուկուլլոսի զօրքից անելի լինել ո՛չ թէ քսան, այլ առ առաւելն երկու անգամ(3)»:

Անշուշտ հարցը ներկայացուած է լոկ վարկածային դժով, որով հետու է հիմնական եզրակացութիւն մ'ըլլալէ:

Վստահաբար, անելի համոզիչ կռուան ունինք հարցին մօտենալու դրամադիտական տուեալներով, երբ նկատի ունենանք Տիգրանակերտի գրաւումէն ետք ձեռք ձգուած աւարը եւ անոր բաշխումը հոռոմէացի զինուորներուն միջեւ: Ըստ Պլուտարքոսի՝ «Լուկուլլոս բռնադրուած էր բոլոր գանձերը եւ քաղաքը կողոպտուի ենթարկած զինուորներուն միջոցով, որոնք այլ հարստութիւններու կարգին, ձեռք ձգեցին 8000 ՏԱՂԱՆԴ արծաթ՝ դրամի վերածուած: Իացի այդ (այսինքն հարստութիւնները, Պ. Ս.) ան (Լուկուլլոս) իւրաքանչիւր զինուորի տուաւ ստացուած աւարէն 800-ական ՏՐԱՆՄԷ»(4):

Յստակ է ուրեմն որ զինուորներուն բաժնուած 800-ական ՏՐԱՆՄԷն վերցուած էր 8000 ՏԱՂԱՆԴի կշիռով արծաթ դրամներու աւարէն, բացի այլ կողոպտուած հարստութիւններէ:

Եթէ ճիշդ է Պլուտարքոսի այս պարբերութեան իմաստին մեր ըմբռնումը, կրնանք ուրեմն ճշդել թիւը զինուորներուն, որոնք օգտուած են այս բաշխումէն, հիմնուելով ձեռք ձգուած դրամական հարստութեան ընդհանուր կշիռին եւ տրախմի արժէքին փոխ-յարաբերութեան վրայ:

Նախ ուսումնասիրենք ՏԱՂԱՆԴին արժէքը. ՏԱՂԱՆԴը ընդհանրացած կշռային չափ մըն էր, սակայն զանազան արժէքներով: Ան ունէր իր ստորաբաժանումները:

Ըստ բարելոնական կշռային դրութեան, տաղանդը կը բաժնուէր 60 ՄԻՆԱՅԻ եւ ՄԻՆԱՆ՝ իր կարգին, 60 ՇԷՔԷԼԻ: Հեւէնիւտական աշխարհին մէջ, որուն ազդեցութեան տակ կը մտնէին փոքրաստիական բոլոր երկիրները, ընդհանրացած էր ԱԴԴԻԿԵԱՆ ՏԱՂԱՆԴը որ կը բաժնուէր 60 ՄԻՆԱՅԻ եւ ՄԻՆԱՆ իր կարգին՝ 100 ՏՐԱՆՄԷ:

Քանի որ այս երկու տուեալները անհրաժեշտ են մեր ուսումնասիրութեան համար, ուրեմն կու տանք ցանկ մը զլիաւոր դրութիւններուն (systems):

3) - Նոյնը, էջ 202:

4) H. Manandian, Tigrane et Rome, Lisbonne, 1963, p. 121.

ԿՇՌԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ	ՏԱՂԱՆԴ	ՏՐԱՆՄ
Բարեւոնական	30 զիւօ 024 կրմ.	4.17 կրմ.(5)
Աղբիւրական	26 զիւօ 194 կրմ.	4.36 կրմ.(6)
Փիւնիկեան	21 զիւօ 180 կրմ.	3.53 կրմ.(7)

Փիւնիկեան ՏԱՂԱՆԴը իր ամենաթոյլ կշիռով, սահմանափակ դործածութիւն ունէր Փիւնիկէի, Կիլիկիոյ եւ կարգ մը փիւնիկեան աղբիւրական տակ դանուող շրջաններու մէջ: Բարեւոնական ՏԱՂԱՆԴը կորսնցուցած էր իր կարեւորութիւնը Մեծն Աղեքսանդրի նուաճումներէն եւ նոր իրաւակարգի հաստատումէն ետք:

Ընդհանրացած կշռային դրութիւնը ԱԴԴԻԿԵԱՆն էր, հելլենիստական դրեթէ բոլոր երկիրներու մէջ: Կասկածէ դուրս է որ Տիգրանակերտի մէջ բռնազբաւուած 8000 տաղանդը պէտք է հաշուել աղբիւրական կշռային դրութեամբ, որովհետեւ՝

Ա.— Մեծն Տիգրան շատ հաւանաբար իր հարուստ դանձերը զիջած էր նորակառոյց մայրաքաղաքին մէջ, նորակազմ Հայկական Կայսրութեան կողմէ նուաճուած երկիրներէն դանձուած հարկերով եւ տուրքերով: Այդ երկիրները բոլորն ալ հելլենիստական մշակոյթով սնած՝ կը հետեւէին աղբիւրական կշռային դրութեան:

Բ.— Ուսումնասիրելով ժամանակակից եւ դրացի պետութիւններն ու անոնց դրամները, կը համոզուինք որ անոնք ալ կիրարկած են աղբիւրական կշռային դրութիւնը: Օրինակ՝

1.— Պարթեւ ԱՐՏԱԽԱՆԻ (88-77 թթ. Ք. Ա.) 10 կտոր տրախմիններու միջինն է 3.95 կրամ(8):

2.— Պարթեւ ՍԱՆԱՏՐՈՒԿԻ (77-70 թթ. Ք. Ա.) 10 կտոր տրախմիններու միջին կշիռն է 3.95 կրամ(9):

3.— Կապադովկիոյ ԱՐԻՈՒՍԱՐՁԱՆԷՍ ՀՌՈՄԷԱՍԷՐԻ (95-62 Ք. Ա.) 10 կտոր դրամներու միջին կշիռն է 4.02 կրամ(10):

5) Harold Mattingly, *Coins of the Roman Empire*, p. XLIV.

6) B. Kisch, *Scales and Weights*.

7) Նոյճը:

8) B. M. C. (British Museum Catalog), Warwick Wroth, *Coins of Parthia*, Bologna, 1964, p. 39, Artabanus, No. 8-17.

9) B. M. C., Warwick Wroth, *Sinatrus*, p. 42, No. 1-10.

10) B. M. C., Warwick Wroth, *Greek Coins of Galatia, Cappadocia and Syria*, p. 39, No. 1-10, Arioparzanès.

4.— Մեծն Տիգրանի մէկ տրախմին, ըստ բրիտանական թանգարանի հաւաքածոյին (թիւ 13), կը կշռէ 4.08 կրամ(11):

5.— Տիգրանեան ուրիշ տրախմի մը, յիշուած Զ. Պտուկեանի կողմէ, կը կշռէ 4.13 կրամ(12):

Թէեւ ազդիկեան օրինաւոր կշիռով տրախմինները պէտք է կըշռեն 4.36 կրամ, սակայն դործնականօրէն կարելի չէ եղած միօրինակ եւ հակակշռուած ձեւով դրամներ հատանել: Տիգրան Մեծի յաջորդ՝ Արտաւազդ Ա.ի օրով տրախմինները կը տարուբերին 3.62 եւ 3.49 կրամի սահմաններուն մէջ:



Տիգրան Ա.ի արծաթ տրախմին
(Տրամագիծը բազմապատկուած երկու անգամ)

Այս տուեաններով, տրամարանական պիտի ըլլար հիմ ընդունիլ տիգրանեան տրախմայի միջին կշիռ մը, հիմնուելով ծանօթ երկու նմոյշներուն վրայ, որոնք կը կշռեն 4.08 եւ 4.13 կրամ, որոնցմէ կը ստանանք 4.10 կրամի յայտարար միջին մը:

Ճշգրտած ըլլալով ՏԱՂԱՆԴին եւ ՏՐԱՆՄին արժէքներուն փոխարարբերութիւնները, կրնանք եզրակացնել որ Տիգրանակերտի մէջ ձեռք ձգուած 8000 տաղանդի կշիռով հատանուած դրամները, ազդիկեան կշիռով կը հաւասարէին 209,568 ջելոյի: Եթէ այս ընդհանուր գումարը վերածենք տրախմի, 4.10 կրամի միջին հիման վրայ, կը ստանանք 51,114,145 կտոր տրախմի: Քանի որ իւրաքանչիւր զինուոր ստացած է 800 (ութը հարիւր) տրախմ այս աւարէն, ուրեմն՝ զինուորներուն թիւը եղած է $\frac{51,114,568}{800}$ կամ՝ 63,892 զինուոր:

800

11) B. M. C., Percy Gardner, *Seleucid Kings*, p. 105.

12) Զ. Պտուկեան, *Արտաշեսեան Հարսուրթեան Դրամներ*, վիեմնա, 1969, էջ 47:

Հետեւաբար, Տիգրանակերտի ճակատամարտին հոտմէացիք և հայեր ճակատած են ո՛չ թէ մէկի դէմ քսան կամ մէկի դէմ երկու համեմատութիւններով, այլ՝ զրեթէ համազօր բանակներով:

Ակնբախ երեւոյթ է արդէն որ տիգրանեան տրախմաները չափազանց հազուագիւտ են, մինչդեռ՝ քարադրամները (Tetradrachms) յարաբերաբար աւելի առատ: Այս երեւոյթը կարելի է բացատրել վերոյիշեալ կողոպուտով, երբ միլիոններու հասնող տիգրանեան տրախմներ, լեզէոնականներու ձեռքը անցնելէ ետք, շատ հաւանաբար յանձնուեցան Հռոմի կամ կայսերական այլ փողերանոցներու, զանոնք վերստին ձուլելու նպատակով, ու վերածուեցան հոտմէական արծաթ դրամներու:

THE NUMBER OF LUCULLUS' SOLDIERS IN THE BATTLE OF TIGRANAGERT BASED ON NUMISMATIC CONSIDERATIONS

BERJ SABBAGHIAN

(Summary)

In 69 B.C. when King Tigranes II of Armenia was engaged in wars in Syria, Lucullus, without the blessing of the Roman Senate and without warning, attacked Armenia and besieged its newly-built capital Tigranagert. Tigranes, heading a small army, hastened to Armenia, but he failed to save the city. According to the Roman sources, Plutarch and Appius, Lucullus, with 15,000 soldiers, defeated Tigranes, who was leading an army of 300,000 soldiers. The Roman general, then looted the city, and carried away 8,000 talents of silver, in coins, and distributed among his soldiers, 800 drachmas per capita. On the basis of talent-drachma monetary evaluations, it is possible to figure out the correct number of Lucullus' soldiers — 63,892 and not 15,000 as Plutarch and Appius have indicated. Tigranes' soldiers, on the other hand, according to historiographical datas, could not have exceeded 80,000.